ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» սեպտեմբերի 2021թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի պաշտոնակատար:

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար ,

Էդգար Մելքոնյան՝ Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի պաշտոնակատար,

Արմինե Ալիխանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար,

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ԲԻԳ ՊԼԱՍ» ՍՊ, «Էկոմիքս» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

1.1 «ԲԻԳ ՊԼԱՍ» ՍՊ, «Էկոմիքս» ՍՊ ընկերությունները հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, հետևաբար վերջիններիս հայտերը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ և 18-րդ չափաբաժինների մասով «ԲԻԳ ՊԼԱՍ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

-4-րդ և 19-րդ չափաբաժինների մասով «Էկոմիքս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

-9-րդ չափաբաժնի մասով «Լայթ ընդ Մոր» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

-3-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի հայտը մերժել,

-6-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի հայտը մերժել,

-19-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ-ի հայտը մերժել,

2.2 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ չափաբաժինների մասով՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի, 15-րդ, 16-րդ չափաբաժինների մասով՝ «Լայթ ընդ Մոր» ՍՊԸ-ի, 17-րդ, 18-րդ չափաբաժինների մասով՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացված գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

2.3 8-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չի ներկայացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետերով՝ գնման ընթացակարգը 2-րդ, 5-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա,

-գնման ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝ _____ Էդգար Տոնականյան

_____ Էդգար Մելքոնյան

_____ Արմինե Ալիխանյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Մարիամ Հայրապետյան